յայտնեցին, և Յովսէփը, որ այդ միջոցին Աժտարխան էր, փու թաց գնալ Պետերբուրգ միջնորդելու նրանց համար, ուր և հասաւ 5 օգոստոսի 1799 ամի:

«Պոտեօմկին իշխանը», գրում է եպիսկոպոսն իւր յիշատակարանում, «մեր գալստեան լուրն առնելով իսկոյն իւր մօտ հրաւիրեց մեզ, երկու ժամ խօսակցեց կրօնական խնդիրների, եկեղեցական ծէսերի, զգեստաւորութեան ու զարդերի և իմ մասին. շատ սէր ու յարգանք ցոյց տուաւ մեզ և հրամայեց գալ հետեւեալ օրը Քրիստոսի Այլակերպութեան եկեղեցին, ուր տաճարական տօնի առթիւ ներկայ պիտի լինէր Կայսրուհին։ Եկեղեցում՝ խորան հրաւիրեցին ինձ։ Կայսրուհու ժամանելուն պէս՝ ես իշխանի ցուցման համեմատ արքայական դռնից դուրս գալով, գլուխ տուի Կայսրուհուն. իշխանը զեկոյց նրան իմ մասին։ Պաշտամունքից յետոյ Կայսրուհին խորան մտաւ և ժպտալով ողջունեց ինձ»։

Կայսրուհու ողորմած ուշադրութիւնը Յովսէփ արքեպիսկոպոսին և վերջնոյս սերտ յարաբերութիւնները Պոտեմկին իշխանի հետ հայ գաղթականների վիճակի դիւրացման նպաստեցին. նրանք ոչ միայն տեղ ստացան Ռօստովի մօտերքում Դօն գետի վրայ, ինչպէս որ կամենում էին, այլ և մի առանձին արտօնագիր չնորհուեցաւ նրանց։ «Ես իմ խընդրածից աւելի ստացայ», գրում էր Յովսէփ սրբազանն իւր յիշատակարանում։ Բարձրագոյն հրովարտակով 'ի 14 նոյեմբերի 1779 ամի առ «Մեր ամենահաւատարիմ Մարկոսեան Պետրոս վարդապետն և ամբողջ հայազգաւան զրիմեցի Հայ հասարակութիւնը» հրման ելաւ «հայերի յարմարագոյն բնակութեան համար տալ նրանց Ս. Դիմիտրիյ Ռօստովցու բերդի գաւառը՝ ուրոյն միւս գիւղերից...»։ «Բարձրելոյ աչը թող ձեր բարեմիտ ընդհանուր ձեռնարկութիւնն օրհնէ», գրում է Կայսրուհին... «հաճ և հաւան ենք ոչ միայն ձեզ բոլորիդ Մեր գթառատ հովանու ներքոյ ընդունել, հապա և Մեր սիրասուն զաւակների պէս սփոփել և այնքան բարեկեցիկ անել ձեզ, որքան որ այդ կախուած է մահկանացուի փափագից և Մեր անընդհատ հոգատարութիւնից...»։ Հրովարտակի 4-րդ յօդուածում ասուած է՝ «Ամենողորմածաբար յանձնարարում ենք Պետրոս ծայրագոյն վարդապետին հովուել իւր հետ Ղրիմից եկած բոլոր Հայ ժողովուրդը, և թոյլ ենք տալիս նրանց եկեղեցիներ և զանգակատուններ չինել և ազատօրէն ամեն պաշտամունք կատարել

Հայ մատենագրության թուանշային գրադարան